



Երեւանի Պետական Համալսարանի Պատուիրակութիւնը Այցելեց «Ազդակ»

0 Գաղութային November 3, 2015

PRINT

EMAIL A- A-



Երէկ առաւօտ «Ազդակ»-ի խմբագրութիւն այցելեցին եւ տնօրէնութեան հետ տեսակցեցան Երեւանի պետական համալսարանի հայագիտական հետազոտութիւններու կեդրոնի փոխտնօրէն Միքէլ Յովհաննիսեան, Երեւանի պետական համալսարանի հրատարակչատան տնօրէն եւ համալսարանի հասարակութեան եւ լրատուութեան վարչութեան պետ Գարէն Գրիգորեան եւ Սոչիի հայկական համայնքի նախագահի տեղակալ Մարկոս Կէսեան:

Խորհրդակցութիւնները կը վերաբերին Երեւանի պետական համալսարանին հետ լիբանանահայ գաղութի կրթական կառոյցներու համագործակցութեան եւ այդ ուղղութեամբ մամուլի լուսաբանման կարեւորութեան, ինչպէս նաեւ Սոչի-Լիբնան գաղութներու փոխձանօթացման հնարաւորութիւններու ստեղծման համար մամուլին կողմէ իրականացուելիք աշխատանքներուն:

☺